



**ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱՎՈՐՅԱՆ**

(Հոգևոր հովիվ հայոց Միանի)

**ԶԱՏԻԿԻ ՏՈՆԸ ԸՍՏ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆՑ**

Զատիկը տոնն է Քրիստոսի հրաշալի Հարության, որուն հետ կապված են բնականաբար Փրկչին հեթանիստներն Երուսաղեմ կատարած հաղթական մուտքը՝ ծանոթ Ծառգարդար, Ծաղկագարդ ժողովրդական կոչումով, Վերջին ընթրիքը, չարչարանքը, խաչելությունն ու թաղումը, Ավագ շաբաթը և հինանց հիսնյակը:

Զատիկը քրիստոնեական եկեղեցվո աւանդներն կարևոր, ամենեն մեծ և ամենեն հին տոնն է, հավիտենական խորհուրդ մը անսասանելի, որուն եկեղեցիին լրությունը հաղորդ կլինի իր իսկ կենսունակությունը հավերժացնող երեք եղելություններով:

Առաջինն է միաշաբաթին բացարձակապես Տեր Հիսուս Քրիստոսի հարության հիշատակին նվիրումը որպես Կյուրակե, Տիրոջ օրը: Կիրակին պետք է անխափան պահվի մասնավանդ եկեղեցիներն և քրիստոսի սուրբ Հարության պանծացումը հրոշակող հանդիսական օրհներգներով, ավետարանական ընթերցվածներով, քարոզությանը և սուրբ պատարագի մատուցմամբ, որուն մասնակցությունը հրամայական և պարտավորիչ է յուրաքանչյուր հավատացյալի համար. քանի որ «Ծնաւ մեզ վերստին ի յոյսն կենդանի ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա. Պետ. Ա. 3):

Երկրորդն է Քրիստոսի մահվան և հարության խորհուրդով կատարվող յուրաքանչյուր մկրտություն, որուն շնորհիվ քրիստոնյա եղողը մահվանեն դեպի կյանք կվերածնի, Աստուծո արքայությունը ծառանգելու և Քրիստոսի հետ հավիտենապես ապրելու իրավունքով. «Զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր և նրա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտու-

թեամբն ի մահ. զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեացուք» (Հոմ. Զ. 3-4):

Երրորդը՝ տոն մարտիրոսներու և սուրբերու, որոնք Աստուծո ողորմությամբ արդեն տիրացած են հավիտենական փրկության և երկինքի մեջ միշտ զԱստված կփառավորեն և մեզ համար կբարեխոսեն:

Եկեղեցին սուրբերու հիշատակը կոգեկոչէ առհասարակ անոնց մահվան կապակցությամբ, քանի որ անոնք իրենց երկրավոր կյանքի մեջ ամեն տեսակ տանջանքի տուկալով և ճշմարտության սիրովն անհատակվելով այժմ փառակից են Քրիստոսի: Սուրբերը հավատացյալներու աչքին օրինակ են կատարելության և միջնորդ Աստուծոյն խնդրվող շնորհներուն արժանանալու: Այսուամենայնիվ մոռնալու չէ որ սուրբ Հարության և կիրակիներու տոնակատարությունը միշտ նախապատիվ, գերազանց է բոլոր մյուս տոներեն որոնք կղասավորվին եկեղեցական տարվան մեջ, համաձայն եկեղեցվո տոմարի այս հիմնական կանոնին:

\* \*

Հատակ չէ թե նախնական եկեղեցին առաջին դարուն ինչպես կհաստատեր և ինչպես կկատարեր Զատիկը:

Ս. Ավետարանեն գիտենք թե մեր Տիրոջ վերջին փրկական տնօրինությունները կկատարվին հրեական պատեքի (գատիկի) տոնին:

Տրված լինելով որ նախնի քրիստոնեականներուն առաջինները ծագումով և ավանդությանը հրեա էին՝ մասնավանդ Արևելքի մեջ, հավանական է որ սկիզբեն անոնք իրենց

ազգակիցներուն հետ մեկտեղ նախ տոնէին հրեական պատեքը Նիսան 14-ին, և ապա առանձնապէս անոր կցեին նաև Քրիստոսի շարչարանքներուն, խաչելոյցան և հարության հիշատակին կատարումը Նիսան 14-ին:

Ասկէ անտարակոյս «Չորեքտասանեայք» (Quartodecimane) անվանումը այն քրիստոնէականներուն՝ որոնք անպայման Նիսան 14-ին կտոնէին Քրիստոսի սուրբ Հարության Չատիկը՝ ըստ Հովհաննոս և Փիլիպպոսի ավանդության:

Մյուս կողմէ, սկիզբէն իսկ քրիստոնէականներն ունակք, մանավանդ հեթանոսութենէ դարձի եկողները նկատի ունենալով Փըրկչին հարության հրաշքին միաշաքթի օր տեղի ունեցած լինելը, քրիստոնէական Չատիկը կտոնէին Նիսան 14-ին հետևող միաշաքթին օրը, զայն Կտրակէ, այսինքն տերունի կամ տիրոջ օր կոչելով: Ասկէ միաշաքթին Կիրակի—տերունական օր—անվանումը, և Չատիկը անպայման միմիայն կիրակի օր տանող նախնի քրիստոնէականներն մեկ հատվածին տրված «Կիրակեանք» (Dominicale) կոչումը:

Չատիկը սկիզբէն իսկ կիրակի օր կտոնեն Հոռոմ և Աղեքսանդրիա:

\* \* \*

Առաջին դարէն սկսյալ Չատիկի տոնին շուրջ կկազմվին երկու ավանդություններ: Արևելյանը՝ ըստ Հովհաննոս և փիլիպպոսյան ավանդության, իսկ արևմտյանը՝ պետրոսյան ավանդությամբ:

Արևելքը կամ Ասիան, հատկապէս Լալիոնիկէ և Հիերոպոլիս, որոնց ժամանակակից են Ապպոլիհնար և Մելիտոն, Չատիկը կը կատարեն բաղարջակերաց օրը հրեից պատեքին հետ, Նիսան 14—15-ին, ծոմը պահելով նախորդ իրիկվանէ. իսկ մյուս մասը՝ Հոռոմ, Աղեքսանդրիա և հետևորդներ՝ Չատիկը կտոնեն Նիսան 14-ին հետևող կիրակին<sup>1</sup>:

Քրիստոսի վերջին ընթրիքին պատրաստության մասին Մատթեոսի Ավետարանին «Եւ յառաջնում ատոր բաղարջակերացն» (Մտթ. ԻՋ 17) խոսքը, մեկնիչներէն ոմանք կկապեն Նիսան 14-ին, երբ Տերը սուրբ վերնատան մեջ իր աշակերտներուն հետ զատկական զանուկը կերաւ և ապա Նի-

սան 15-ին բուն բաղարջակերաց կամ հրեից պատեքին օրը շարչարայեցաւ և մեռաւ խաչի վրա:

Հիերոպոլոս Մելիտոն եպիսկոպոսը կատարկէ թէ Հիսուսի շարչարանքին և խաչելոյցան համար Նիսանի 15-ը չի համապատասխանէր մովսիսական օրէնքին և չի կրնար պաշտպանվի առանց հակասություն մտցնելու համատեա Ավետարաններու (Ստթ. ԻՋ 17, Մրկ. ԺԸ 12, Ղկա. ԻԲ 7) և Հովհաննոս Ավետարանին (ԺԳ 1, և ԺԹ 14) միջև, որ հատկորէն կվկայէ թէ Փըրկչիչը կմտնի զատկի ուրբաթ իրիկուն. «Էր ուրբաթն զատկի և էր ժամ իբրև վեցերորդ» (Յվն. ԺԹ 14)<sup>2</sup>:

Երկրորդ դարուն իսկ քրիստոնէականներուն միջև վեճ կծագի Չատիկի ճիշտ օրվան մասին: Վեճը փոքր չափով մը կշռապիտ նաև Չատիկի նախապատրաստության պահեցողությունը, որ տեղէ տեղ կտարբերի. ոմանք մեկ օր կպահեն, ոմանք երկու օր, ոմանք ալ ավելի. իսկ ուրիշները քառասուն ժամ անընդհատ ծոմ կմնան, ըստ Լիոնի եպիսկոպոս Իրենեոսին առ Վիկտոր պապ գրած հաշտարար նամակին<sup>3</sup>:

Ըստ Եվսեբիոսի Նիսան 14-ին և անոր հետևող կիրակիին իրարմէ զատ երկու տարբեր օրեր Չատիկը տոնողներուն միջև եղած վեճը կրնար աղետալի դառնալ եկեղեցւո համար Վիկտոր պապին օրով (189—199), որ կպատնար Առաջավոր Ասիայի եպիսկոպոսները գրկել եկեղեցւո հաղորդակցութենէն: Իրենեոսի միջամտությամբ կփրկվի կացությունը:

<sup>2</sup> Ըստ Մաղարիա արք. Օրմանյանի «Էր ուրբաթն զատկի» ավետարանական բնորոշումը կնշանակի «Այն օրը ուրբաթ և զատկի էր... թե նույն ուրբաթը Նիսանի 15 էր և զատկի տոնին առաջին օրը»—«Համապատում», հոդ. 326, հմմտ. հոդ. 257: «Հինգշաքթիին, որուն երեկոյին ընթրիքը տեղի ունեցաւ Նիսան 14 էր և հաջորդ ուրբաթը, հորում Հիսուս խաչվեցաւ ու մեռաւ Նիսան 15 էր, այսինքն է Չատիկի տոնին առաջին օրը»: Օրմանյան, անդ, հոդ. 257:

Ըստ Օրմանյանի Ավագ հինգշաքթվան և ուրբաթվան Նիսան 14-ը և 15-ը կհամապատասխանեն հոռոմական տոմարի 783-ին և մեր թվականի 30-րդ տարիին ապրիլ 6-ին և 7-ին և Հիսուսի կյանքի 34-րդ տարվան: Անդ, ըստ վերնույն:

<sup>3</sup> Եվսեբիոս, Պատմություն եկեղեցւո, Ե, ԻԳ, և ԻԳ հմմտ. G. Fritz Paques. Les Controverses Pascales; Dictionnaire de theologie catholique, tom II, Paris, 1931, col. 1952.

<sup>1</sup> Եվսեբիոս, Պատմություն եկեղեցւո, Ե, ԻԳ, ԻԴ: